

Ln  
1418

Դ Ա Ս Ա Տ Ե Տ Ր

1909

Կ Ր Օ Ն Ի

Ա. ՏԱՐԻ.

ԿԱԶՄԵՅ

ՄԻԱԲԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ  
ՅՈՒՄԻԿ ՎԱՐԴԵՊԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ

«Ունկնդիր» եւ տես բարձրով սրտիւ,  
«զոր եզմանակես բերանով» հաւատաս-  
տիս եւ սրտիւ. եւ որոց հաւատաս-  
տիւ՝ զնոսին եւ գործով ցուցցես»:

Մաշտոց մեռնադրոշեան

L Ե Ո  
1418

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂՈՒԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

1890—ՌՅԼթ.

ԳՆԱՆՈՒՄ

ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ ԿՐՈՆԻ

ԳՆԱՆՈՒՄ

ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ

ԿՐՈՆԻ

ՄԻԱԲԵՆ ՄԵՅԻ ԱԹՈՒՌՅ Ս. ԷԶՄԻԼՅՆԻ  
ՅՈՒՍԻԿ ՎԱՐԴԱԳԵՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ

2166.

«Ունինդէր եւ տես բոլորով սրտիւ,  
«գոր եղանակես բերանով՝ Հաւատաս-  
«ցես եւ սրտիւ, եւ որոց Հաւատաս  
«Սրտիւ՝ զնոսին եւ գործով ցուցցես»:

Մալտոց ձեռնարուքեան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

1890—ՌՅԼԹ

1421



41418-60

1881

1881

**ՀՐԱՄԱՆԱԻ**

**ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ**

**ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ**

**ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.**

**Դ Ա Ս Ա Տ Ե Տ Ի**

**ԿՐՕՆԻ**

«Ունկնդիր և տես բոլորով սրտիւ.  
«զոր եղանակես բերանով՝ հաւա-  
տացես և սրտիւ. և որոց հաւա-  
տաս սրտիւ՝ զնոսին և գործով  
«ցուցցես»:

Մաշտոց ձեռնադրութեան

ԳԼ. Ա.

Առէլ՝ Գրքադր՝ Բնի և Կի-րակէ.

Աստուած ստեղծել է երկինքն ու երկի-  
րը և նոցա միջի բոլոր բաները:

Աստուած երկրիս վերայ ստեղծել է դաշ-  
տեր՝ վարուցանի համար, անտառներ՝ փայտ  
ունենալու համար, ջուր՝ խմելու և ցան-  
քերը ջրելու համար:

Աստուած ամառը անձրև է տալիս՝ որ  
ջուր չեղած տեղերն էլ ջրուեն, ու օդն  
էլ քիչ հոգանայ. Զմեռը ձիւնով ծածկու-

մէ երկիրը որ ծառերի և բոյսերի արմատները զրտահար չը լինին, երկիրն էլ փափկանայ ու պարարտանայ:

Աստուած ստեղծել է կենդանիներ, բանացնելու՝ և նոցա մնիլ, կաթից, բրդից ու կաշուց օգտուելու համար. ստեղծել է թռչուններ, նոքա էլ իրանց օգուտն ունին, ինչպէս հաւը, սուգը, բազը և այլն, մեզ տալիս են ձու, ձագ, միս և փափուկ փետուր:

Աստուած ստեղծել է երկնքում արև, լուսին և աստղեր: Արևը ցերեկը լոյս ու տաքութիւն է տալիս. սրով ածում և զօրանում են բոլորը և մե՛ք էլ միջոց ենք ունենում լոյս ցերեկով աշխատելու. իսկ լուսինն ու աստղերը գիշերը առանց տաքութեան փոքր ինչ լոյս են տալիս. որ մենք բոլորովին խաւարի մէջ չըմանք, և օրուայ ծանր աշխատանքից յետոյ գիշերը հով եղանակին հանգիտա քնենք:

Աստուած ինչոր ստեղծել է, բոլորն էլ բարի են ու պէտքական և բոլոր բաները

մեր համար է ստեղծել: Աստուած վեց օրում առաջ այս բոլոր բաները ստեղծեց, յետոյ էլ մարդուն ստեղծեց. եօթներորդօրը ինքն հանգստացաւ և հրամայեց որ մարդն էլ վեց օր աշխատի եօթներորդօրը հանգստանայ: Հանգստանալու օրը կիւրակէ է կոչուում, որ կնշանակէ Աստուծոյ կամ Տիրոջ օր:

Արովհետև Աստուած մեզ հօր պէս սիրելով ամեն բան մեր համար է ստեղծել, մենք էլ պարտաւոր ենք Աստուծուն սիրել ինչպէս որդին կըսիրի իւր հօրը: Մենք պարտաւոր ենք Աստուծոյ անունը միշտ յիշել աղօթք անելով. բայց ուելի պէտք է կիւրակէ. օրը աղօթենք եկեղեցի գնալով և բարի բան մտածելով ու գործելով:

Կիւրակէ օրը պէտք է սուրբ պահել և այն մարդը միայն կարող է սուրբ պահել կիւրակէն, ով Աստուծուն սիրումէ. և միայն նա կարող է կիւրակէ օրը լաւ հանգըստ մնալ՝ ով ամբողջ շաբաթ աշխատել է ջերմեռանդու թեամբ: Աստուած միայն նո-

րա աղօթքը կըլսի ու կը կատարի՝ որ ամբողջ շաբաթ աշխատելուց յետոյ կիւրակէ օրը հանգստանալով եկեղեցի կը գնայ, բարի բան կըմտածի և կը գործի: Այդ պիտին Աստուծոյ որդի կըլինի և իրաւունք կ'ունենայ Աստուծուն Հայր անուանել:

\* \*  
\*

Տէրս-նահան աղօթք:

Հայր մեր, որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քո, եկեացէ արքայութիւն քո, եղեցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապաղորդ՝ տուր մեզ այսօր թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց պարտապանաց, և մի տանիր զմեզ ի փորձութիւն, աղ փրկեա՛ զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւ իտեանս ամէն:

\* \*  
\*

Մաղխանք

Յիշեա՛, տէր, և ողորմեա.

\* \*  
\*

Տէր, ողորմեա՛. տէր, ողորմեա՛. տէր, ողորմեա. տէր ողորմեա.

Արի, Աստուած, հարցն մերոց, որ ապաւէնդ ես նեղելոց՝

Հաս յօգնութիւն ծառայից քոց՝ անօգնական ազգիս Հայոց:

ԳԼ. Բ.

Ս. Կոյ Մարիամի շնանդը:

Մի մարդ կար և մի կնիկ. մարդու անունն էր Յովակիմ՝ իսկ կնոջ անունը՝ Աննա: Դորա հրէաներ էին և Հրէաստանումն էին ապրում՝ Աննան ամուլ էր (յբերը), սորա համար էլ շատ տխուր էր և իւր մարդու հետ միշտ աղօթք էր անում՝ Աստու-

ժուռնոյ որ մի զաւակն ունենայ. Աստուած արժանաւոր ու արդար մարդկանց աղօթքը միշտ լսում է, լսեց Յովակիմի և Աննայի աղօթքը և նոցա ծերութեան ժամանակ մի աղջիկ պարգևեց: Յովակիմն ու Աննան իրանց աղջկայ անունը Մարիամ գրին. և ուրախացած՝ Աստուծոց շնորհակալ եղան ու խոստացան որ իրանց աղջիկը դարձեալ Աստուծուն ընծայեն: Երբ փոքրիկ Մարիամը երեք տարեկան դարձաւ՝ Յովակիմն ու Աննան տարան նորան տաճարը (հրէաների եկեղեցին տաճար էր կոչուում) և ընծայեցին Աստուծուն:

Յովակիմն ու Աննան շուտով մեռան. իսկ Մարիամը տաճարի մէջ Աստուծոյ օրէնքներն ու սլաութիւնները քահանաներից սովորելով ծառայումէր տաճարին և երբ մեծացաւ, քահանաները նորան յանձնեցին իւր ազգական մի մարդու, որի անունը Յովսէփ էր, և մի բարի ու արդար մարդ էր: Քէ Յովսէփը և թէ Մարիամը Կալիթ մարգարէի ցեղից էին:

— Մարիամ՝ Աստուծոյ կոյսի ծնունդը տօնու-  
մէնը Սեպտեմբերի 8-ին իսկ տաճարին ըն-  
ծայուելը՝ Նոյեմբերի 21-ին: Այդ երկու  
օրերին էլ դպրոցական արձակուրդ է լի-  
նում. որ աշակերտներն էլ իրանց ծնող-  
ների ու վարժապետների հետ եկեղեցի գը-  
նան, աղօթեն Մարիամի պէս շնորհալի  
սուրբ և Յովսէփի պէս բարեսիրտ արդար  
լինել:

Փառաբանութիւն.

Փառք քեզ, Տէր Աստուած մեր.

\* \*

Իսկ մեր Փառաւորեցուք որ յառաջ քան  
զյաւ իտեանս երկիրպագանելով սրբոյ Երոր-  
դութեան և մի Աստուածութեան Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և  
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

\* \*

Սուրբ Աստուած. սուրբ և հղօր. սուրբ

և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ:

ԳԼ. Գ.

Ա-Է-Կ-Ա-Ծ-Յ.

Յովսէփն ու Մարիամ սուրբ կոյսը Հրէաստանի Գալիլեա գաւառի Նազարէթ քաղաքումն էին բնակում: Մի անգամ Մարիամ սուրբ կոյսը աղօթք էր անում, Աստուծոյ հրամանով Քարրիէլ հրեշտակը երևեց Նորան ուղջոյն տուեց և յայտնեց որ, Նա սուրբ Հոգու շնորհքով պէտք է ծնի մի որդի, որի անունը Յիսուս պէտք է դնի, Յիսուսը Աստուծոյ որդի լինելով պէտք է մեղքի մէջ կորած մարդկանց փրկի:

Մարիամ սուրբ կոյսը հաւատաց հրեշտակի խօսքին. շնորհակալ եղաւ Աստուծոց և ասաց:

Ես կը փառաւորեմ Աստուծոյ անունը. իմ հոգին էլ իմ փրկիչ Աստուծով կուրախանայ. որովհետեւ Աստուած իմ խոնար-

հուծիւնը վարձատրեց՝ այսուհետև ինձ բոլոր ազգերը երանի կրտան:

— Այս ամօնը կոչվում է Ա-Է-Կ-Ա-Գ ամօն և կատարվում է Ապրելի 7-ին ամեն տարի:

ԳԼ. Գ.

Յ-Է-Կ-Ա-Գ Գ-Է-Կ-Ա-Գ Զ-Է-Կ-Ա-Գ.

Ինչպէս հրեշտակը աւետիք տուեց, Մարիամ սուրբ կոյսը սուրբ Հոգուով յղացաւ և ծնելու օրերն էին, երբ թագաւորը հրամայեց որ ամեն մարդ գնայ իւր իսկական երկիրը և այնտեղ ցուցակի մէջ գրուի: Յովսէփն ու Մարիամն էլ այս հրամանին հնազանդելով դուրս եկան Նազարէթ քաղաքից և գնացին Բաւիթ մարգարէի Բէթղեհէմ՝ քաղաքը այնտեղ ցուցակի մէջ գրուելու՝ իբրև Բաւթի ցեղից եղող մարդիկ:

Յովսէփը աղքատ էր և քաղաքում չբարոզանալով տեղ գտնել. քաղաքից դուրս՝ մի այրի մէջ պարտաւորուեց գիշերն անցնել, իսկ այդ այրի մէջ անասուններ էին

ընակում: Հենց այդ գիշերը այրի մէջ էլ Մարիամ ս. կոյսը ծնաւ Յիսուս Քրիստոս- սին:

Յիսուսի ծնունելու ժամանակ հրեշտակը երևեց հովիւներին, որ այրին մօտիկ տեղե- րում արածում էին իրանց հօտերը և եր- կիրը լուսաւորեց. հովիւները այս հրաշքից շատ վախեցան. հրեշտակն առաջ նոցա. մի վախենաք, աչքներդ լոյս. այսօր ձեր հա- մար փրկիչ ծնուեց. կրգնաք նորան այրի մէջ մարում խանձարուրով փաթաթուած կը գտնէք: Յանկարծ այդ հրեշտակի հեռ ուրիշ հրեշտակներ էլ իջան և սկսեցին Աս- տուծուն փառաբանել ասելով.

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղալութիւն ի մարգիկ հաճութիւն»,

Երբ հրեշտակները վերացան՝ հովիւները եկան և այրի մէջ տեսան Յովսէփին, Մարի- ամին և մարի մէջ դրւած խանձարուրա- պատ Յիսուսին, հաւատացին նորա մասին եղած խօսքերին և երկրպագեցին:

— Յիսուս կրնշան սկէ փրկիչ. որովհետեւ

Յիսուս Աստուած, էր և Աստուծոյ որդի, ու մարդկանց փրկելու համար ս. կոյս Մարիա- մից ծնուեց, այս պատճառով էլ ս. կոյս Մարիամը կոչուի Աստուածածին կամ Աստուածամայր:

Յիսուսի ծննդեան տօնը կատարվում է ա- մեն տարի Յունվարի 6-ին:

\* \*

Տալ շնորհան.

Այսօր տօն է ծննդեան, աւետիս,  
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:

Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս,  
Ծնաւ երեւ զանմաս արքայն աւետիս:

\* \*

Նարական շնորհան.

Եղ. Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայ- սըմ աւուր յայտնեցաւ. Հովիւք երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի.

Մնաւ նոր արբայ ի Բեթղեհէմ՝ քաղաքի.  
որպէք մարդկան, օրհնեցէք, զի վասն մեր  
մարմնացաւ:

Անբաւելին երկնի և երկրի ի խանձարու-  
րքս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ  
այրին բաղմեցաւ:

~~~~~

ԳԼ. Ե.

Յիսուսի գործերը:

Յիսուս երբ երեսուն տարեկան դարձաւ՝  
մկրտուեց և սկսեց քարոզել՝ որ մարդիկ ի-  
րանց չար ճանապարհից հեռանան: Յիսուս  
Հրէաստանում և Երուսաղէմումն էր քա-  
րոզում: Բոլոր աշխարհի մարդիկ չար էին,  
իսկ հրէաները համ չար էին, համէլ նա-  
խանձոտ և մի և նոյն ժամանակ հաւատա-  
ցրել էին թէ միայն իրանք են բարի ու առ-  
տուածապաշտ ազգը:

Յիսուս նոցա կեղծաւորութիւնը երես-  
ներովն էր տալիս և խրատում՝ որ ճշշ-

մարտութեան հետեւն իսկ հրէաները փո-  
խանակ Յիսուսին լսելու. խրատելու թշշ-  
նամացան Յիսուսի հետ և պատճառ էին փնտ-  
ռում Յիսուսին կորցնելու:

Յիսուս քարոզութեան հետ հրաշաքներ էլ  
էր գործում. Յիսուս բժշկումէր կոյրե-  
րին, կաղերին. անդամալոյճներին, մեռել-  
ների էլ յարութիւն տուեց, ուստի և  
շատերն էլ հաւատումէին նորան: Այս  
հաւատացողների մէջ տասն և երկու մարդ  
միշտ Յիսուսի հետն էին, և Յիսուսի աշա-  
կերտներն էին: Յիսուս պատուիրեց իւր  
այս աշակերտներին որ իրանք էլ գնան ու  
քարոզեն, այս պատճառով էլ կոչուեցին  
Առաքեալ՝ որ կրնշանակէ ուղարկուած:

Այս առաքեալների առաջ կատարեց Յի-  
սուս իւր բոլոր քարոզութիւններն ու հը-  
րաշքները, որոնք և Յիսուսի վկաներ դար-  
ձան:

~~~~~

Յոգաս, խորհրդական ընկերք և պանագոսայ.

Յիսուսի տառներկու աշակերտներէից մէկն էլ Յուզան էր, Յուզան շատ փողասէր մարդ լինելով, երբ տեսաւ թէ Յիսուսի թշնամի հրէաները կամենումն Յիսուսին սպանել, բայց չեն կարողանում գանել ու բռնել, գնաց նոցա մօտ և ասաց. ինձ ի՞նչ կըտար որ ես Յիսուսին մատնեմ. Հրէաները խոստացան երեսուն արծաթ:

Յիսուս իւր Աստուածային իմաստութիւնով իմացաւ Յուզայի միտքը. իմացաւ որ հրէաները իրան պէտք է սպանեն Չատիկի տօներին, իւր աշակերտներին ասաց. շատ եմ ցանկանում այս Չատիկը ձեզ հետ աւնել. և աւնելով աշակերտներին՝ գնաց մի վերնատուն ուր Չատիկ սեղանը պատրաստուած էր և այնտեղ սկսեց աշակերտների հետ ընթրիք անել: Այդ օրը հինգշաբթի էր:

Սեղանի վերայ Յիսուս իւր մահուան մատին էր խօսում և աշակերտներին միխթարում ու յորհորում էր որ իրան չըթողնեն ու հեռանան. չըմոռանան իրան: Յիսուս խոստացաւ իւր Յարութիւնից յետոյ նոցա միխթարելու ու շնորհք տալու համար սուրբ Հոգին ուղարկել:

Յիսուս երբ իւր աշակերտներին յայտնեց թէ նոցանից մէկը պէտք է իրան մատնի, աշակերտները ապշեցին, և Պետրոսը անքով արեց Յովհաննէսին՝ որ Յիսուսին հարցնի թէ ով է մատնիչը: Յովհաննէսը Յիսուսի վզովն ընկաւ ու ասաց. Տէր, ով է որ քեզ պէտք է մատնի: Յիսուս պատասխանեց. ում որ պատուը ասամ, նա է, և պատուը տալով Յուզային՝ ասաց. գնա՛, ինչ որ անելու ես՝ տրա՛. Յուզան գնաց իսկ միւս աշակերտները կարծեցին թէ Յիսուս Յուզային բան աւնելու ուղարկեց:

Աշակերտները շատ տխրած ու յուսահատ էին. Յիսուս նոցա սիրտ տակեց. առաւ

հաց օրհնեց, կարեց, տուեց աշակերտներին և ասաց.

«Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասըն ձեր և բազմաց բաշխի ի քառութիւն և ի թողութիւն մեղաց»:

Առաւ նոյնպէս բաժակը (գինի), օրհնեց, շնորհակալ եղաւ խմեց և իւր աշակերտներին տուեց ասելով.

«Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յազապս ձեր և բազմաց հեղանի ի քառութիւն և ի թողութիւն մեղաց»:

Յիսուս պատուիրեց իրան միտ բերելու համար այս յիշատակը միշտ կատարել և կատարվում է սուրբ պատարագի խորհրդով:

— Այդ օրերը հրէաները բազարջ էին ուտում և տօնն էլ բազարջակերաց տօնն էր կոչվում ուստի և այն հացը որ Յիսուս աշակերտներին տուեց, բազարջ էր իսկ բաժակը անարատ գինի սօբա համար էլ մեր եկեղեցին սուրբ հաղորդութիւնը բազարջ

հացով և անապակ գինով է կատարում. հացը մինչև պատարագը նշխար իսկ գինին բաժակ է կոչվում. իսկ պատարագին՝ նշխարը դառնում է Յիսուսի մարմին իսկ գինին՝ արիւն:

Յիսուսի աշակերտները իմանալով որ Յիսուս պիտի խաչուի՝ սկսեցին մտածել թէ իրանց մեծը ով կըլինի այնուհետև և ամեն մինը կըցանկար ինքը լինի մեծ: Յիսուս նոցա այս ամբարտաւան խորհուրդը անարգելու համար ընթրիքից յետոյ առաւ ջուր կոնքով և սկսեց լուանալ աշակերտների ոտները: Առանալուց յետոյ ասաց. ես ձեր տէրն ու վարդապետն եմ և ձեր ոտները լուացի. դուք էլ միմեանց ոտք լուացէք. ով կամենում է ձեզանից մեծ լինել թող բոլորին ծառայէ և իրան բոլորից փոքր դասի:

— Խորհրդական ընթրիքի և ոտնալուայի յիշատակը Աւագ—Հինգշաբաթի օրն է կատարվում. ընթրիքինը՝ պատարագին իսկ ոտնալուայինը՝ երեկոյեան ժամերդութեան

ժամանակի, և եկեղեցու գլխաւորը լուսնու մէ միւսներին ուսնէրը:

ՀԱՐԱԿԱՆ ՈՏԵԱԼՈՒԵՅԻ

ալ. Այսօր կանգնեցաւ աւագան մկրտութեան ի թողութիւն մեղաց մերոց:

Այսօր աչքն մեր լուսնայր զոտս աշակերտաց և պատուիրէր զայս ասելով:

Մի ոմն ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ և որոշի յաշակերտացս:

Չայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝ հարցանել թէ ով իցէ:

Իանն՝ զոր ասաց Յիսուս՝ արամեցոյց զիւր աշակերտս և խռովեցան ամենեքեան:



ԳԼ. Ե.

Յիսուսի մարտիրոսներն ու զարկարանքը  
Յիսուս ոտնալուայից յեաոյ խրատական խօսքեր խօսելով աշակերտներին հետ գնաց

Զի թեմեաց սարը, որ Երուսաղէմի մօտ էր: Յիսուս աշակերտներին թողեց մօտիկ Գեթսեմանի գիւղում իսկ ինքն առանձնանալով սկսեց աղօթել և երեսի վերայ ընկած՝ լալ:

Այդ ժամանակ Յուզան, որ խորհրդական ընթրիքի ժամանակ հեռացել էր ու գիտէր Յիսուսի տեղը զինուորուած մարդիկ առած հետը եկաւ մօտեցաւ Յիսուսին և համբուրեց: Յիսուս ասաց, Յուզա՛, ինձ համբուրելով ես մատնում: Արովհետեւ գիտէր Յիսուս որ Յուզան անել էր թէ, ում որ համբուրեմ, նա է Յիսուսը, բռնեցէք:

Յուզայի հետ եկած մարդիկը բռնեցին Յիսուսին, կապեցին և տարան: Ամբողջ գիշերը չարչարեցին—ծեծումէին, երեսին թքում, ձեռքը եղեգնեայ (յամիշ) գաւազան տալով ծաղրելու համար գլուխ էին տալիս ու ասում. Նրէաների թագաւորն ապրած կենայ: Յիսուսի երեսին ապտակ էին խփում, և ասում Գու սուրբ և մարգարէ մարգ ես. իմացիր քեզ զարկողը: Յիսուս համբուրում էր և աղօթում ասելով. Հայր,

այս բանը սոցա համար մեզք մի համարիլ վասն զի չըգիտեն ինչ են անում:

Առաւօտը երբ լոյսը բացուեց հրէաները Յիսուսին տարան Երուսաղէմի դատաւորի մօտ, որի անունը Պիղատոս էր. գանգաւեցին և ասացին. այս մարդը մեր օրէնքին հակառակ բաներ է խօսում և գործում. իրան հրէաների թագաւոր անուանելով, գրգռում է ժողովրդին որ թագաւորին հարկ չըտան ու չըհնազանդեն. օրէնքով սա մահապարտ է. խաչիր:

Պիղատոսը երբ Յիսուսին հարցաքննելով տեսաւ որ անմեղ է, կամեցաւ արձակել բայց հրէաները զայրացան ու սկսեցին աղաղակել. եթէ դորան արձակես՝ կայսրի (թագաւորի) բարեկամը չես. կայսրն է մեր թագաւորը. խաչիր դորան: Պիղատոսը վախեցաւ և հրամայեց Յիսուսին խաչել:

\* \* \*

ՀԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՓՐԿՉԻՆ.

Ք. Ի գիշերին՝ յորում՝ մատնիւր փրկիչն

Մեր ի մահ խաչին. ել ի լեառն Ձիթենեաց. աղօթելով զայս ասէր. Հայր, անցն յինէն զբաժակո:

Իսկ անօրէն աշակերտին թողեալ զգուժ սիրայ նորա, և փութայր առ քահանայսն ասէր՝ ինձ զինչ կամիք տալ զի մատնեցից զյարդապետն:

Ժողովեալ հրէիցն կշռեցին արժաթ բազում, առեալ տարան առ Պիղատոս ասեն՝ ի ինչ հան, ի խաչ. զի հայհոյիչ է օրինաց:

ԳԼ. Ը.

Յիսուսի խաչելը, մահն ու լուսնային.

Ձառկի ուրբաթ օրն էր: Երբ հրէաները Յիսուսին խաչելու հրաման առան՝ տարան մի բարձր տեղ, որտեղ առ հասարակ մահապարտներին կամ խաչում կամ գլխատումէին. այդ տեղը կոչվումէր գողգոթա, որ գլխատուելու տեղ կը նշանակէ:

Յիսուս ինքն իւր խաչը շալակած բարձր-

ացաւ գողգոթա. այդ տեղ հրէաները Յիսուսին խաչուած երկու աւազակների մէջ տեղը խաչեցին: Յանցաւորների յանցանքը գրվում էր նոցա խաչի վերայ. Յիսուսի յանցանքն էլ համարվում էր այն որ ինքն որպէս թէ իրան թագաւոր է հռչակում. ուստի Պիղատոս էլ Յիսուսի խաչի վերայ գրեց. «Յիսուս նազովրեցի՝ թագաւոր Հրէից»:

Յիսուս երբ խաչի վերայ էր, թէ հրէաները և թէ խաչուած աւազակներից մէկը Յիսուսին ծաղրում էին ու ասում. հրէաների թագաւորը թող այժմ՝ խաչից իջնի, մենք էլ տեսնենք ու հաւատանք, ուրիշներին էր ազատում, թող այժմ իրան ազատի:

Յիսուս խաչի վերայ արնաքամ և պապակած ջուր խնդրեց, հրէաները լեղիով քացախ տուին. զինուորներից մէկը գեղարդով կողբը ծակեց՝ որ աւելի չորչարուի Յիսուս: Այս տանջանքների մէջ Յիսուս երբ իւր Մարիամ մօրը և Յովհաննէս սիրելի աշակերտին տեսաւ խաչի տակ կանգնած, մոռացաւ իւր ցաւը և մօրը մխի-

թարելու համար Յովհաննէսին ասաց. ահա քո մայրը, մօրն էլ ասաց, ահա քո որդին. և այսպէս ամեն բան վերջացած համարելով Յիսուս բարձր ձայնով ասաց. Ով իմ Աստուած, ով իմ Աստուած. էլ ինչ՞ուր ես ինձ թողնում. Հայր, իմ հոգին քո ձեռքն եմ աւանդում, և աւանդեց հոգին:

Այս ժամանակ խաւարը ծածկեց ամբողջ երկիրը, արեգակը խաւարեց. երկիրը շարժուեց քարերը պատառուեցին: Նատերը տեսնելով այս հաւատացին Յիսուսին և ասում էին. արդարև սա Աստուծոյ որդի էր:

Յիսուս կէս օրին խաչուեց և երեք ժամ խաչի վերայ տանջուելով երեկոյեան պահին հոգին աւանդեց:

Հրէաները Նաբաթ օրն են կիրակի պահում: Նաբաթ օրն էլ նոցա Չատիկն էր. Յիսուսի և աւազակների մարմինները խաչի վերայ չմնալու համար, իսկոյն պատրաստութիւն տեսան նոցա թաղելու. որովհետև Նաբաթ օրը նոքա ամենևին բան չէ-

ին անում: Յովսէփ անուշով մի արդար իշխան մարդ որ ծածուկ Յիսուսի աշակերտն էր, գնաց Պիղատոսից թանկագին ընծաներով առաւ Յիսուսի մարմինը. և ինչպէս հրէաների սովորութիւն էր լուաց, օձեց և պտտանելով թաղեց իւր համար նոր պատրաստած գերեզմանի մէջ:

Հրէաները լսել էին որ Յիսուս ասել էր թէ երեք օրից յարութիւն պէտք է առնի, ուստի որպէս զի աշակերտները չբոստանան Յիսուսի մարմինն ու ասեն թէ յարութիւն է առել, մի մեծ քար գրին գերեզմանի վերայ կնքեցին և պահապաններ կարգեցին:

\* \*  
\*

Ի ԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԵՐԳ.

Խաչի քո, Քրիստոս. երկիրպագանեմք. և զսուրբ զխաչելութիւնդ քո մեծացուցանեմք, և զսուրբ զթաղուամնդ քո փառաւորեմք:

Եկայք, հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ:

Փայք սուրբ խաչիդ ալէլուեա. խաչելութեանդ, ալէլուեա. սրբոյ թաղմանդ, ալէլուեա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց, ի պրտոյ գորեկոյ գինւոյ և ձիթւոյ իւրեանց լըցուցեր զնոսա:

ԳԼ. Թ.

Յեառն Յարութիւնը.

Անցաւ ուրբաթ գիշերը. շաբաթ երեկոյեանը լոյս կիւրակէ Մարիամ Մագդաղե-

նացին և Մարիամ անուշով դարձեալ մի ուրիշ կին եկան Յիսուսի գերեզմանը տեսնելու. այդ ժամանակ մի մեծ շարժումն եղաւ. երկնքից հրեշտակ եկաւ գերեզմանի քարը գլորեց մի կողմ և նստեց նորա վերայ: պահապանները այս բանից սաստիկ վախեցան և մեռելի պէս վայր ընկան:

Հրեշտակը կանանց ասաց. դուք մի վախենաք, գիտե՛մ, խաչուած Յիսուսին էք որոնում. այստեղ չէ, յարութիւն առաւ. շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք թէ յարութիւն առաւ և ձեզանից աւաջ Գալիլեայում կը լինի. այնտեղ կը տեսնէք նորան:

Երբ կանայք գերեզմանից ուրախ ուրախ յեա էին դառնում, Յիսուս պատահեց նոցա ու ասաց. Ո՛ղջ էք. նոքա էլ Յիսուսի ստներն ընկան և երկրպագեցին. Յիսուս պատուիրեց որ Գալիլեայում իրան տեսնեն. իսկ այժմ գնան շուտով աշակերտներին պատմեն ինչ որ տեսան:

Յիսուս Գալիլեայում տեսաւ աշակերտ-

ներին ու ասաց. ինչպէս ինձ իմ հայրն է ուղարկել, այնպէս էլ ես եմ ձեզ ուղարկում. այսուհետև գնացէք քարոզեցէք բոլոր հեթանոսներին, (կռապաշտ), Մկրտեցէք նոցա՝ Հօր, Որդւոյ և սուրբ Հօգւոյ անունով. ինչ որ ձեզ պատուիրեցի՝ նոցա էլ սորվեցրէք որ պահեն ու կատարեն, ես էլ մինչև աշխարհի վերջը ձեզ հետ կը լինիմ: — Յիսուսի յարութիւնը տօնվում է Չափին. իսկ զատիկ՝ ազատութիւն կը նշանակէ, որովհետև Յիսուս իւր յարութեամբ ազատեց մեզ կռապաշտութիւնից և մահուան երկիւղից. ինչպէս Յիսուս յարութիւն առաւ, այնպէս էլ մեռելներին պէտք է յարութիւն տայ մի օր. դորա համար մահը այժմ մի երկար քուն է համարում և մեռածներին ննջեցեալ այսինքն քնած ենք կոչում:

Յարութեան օրը մեռած մարդիկ պէտք է յարութիւն առնեն բարիք գործողները Աստուծոյ արքայութեան մէջ ապրելու իսկ չար գործողները՝ դժօխքի մէջ չարչարուելու համար:

ԺԱՄԱՄՈՒՏ

Քրիստոս յարեալ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ կեանս պարգևեաց, նմա փառք յաւիտեանքս. ամէն:

\* \*

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԿԱՆ.

այ. Յարեալ Քրիստոս ի մեռելոց. արէլուեա. Նկայք, ժողովուրդք, երգեցէք Տեառն արէլուեա:

Յարուցելոյն ի մեռելոց արէլուեա. Որ զաշխարհս լուսաւորեաց արէլուեա:

\* \*

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:



ԳԼ. Ժ.

Սուրբ Պատարագ.

Յիսուս երբ վերջին անգամ իւր աշա-

կերտներ ի հետ ուտումէր Զատիկ ընթրիքը, առաւ բաղարջ հացը իւր մարմնի տեղ և անապակ զինին՝ իւր արիւնի տեղ՝ օրհնեց տուեց նոցա և պատուիրեց իրան յիշելու համար նոյն խորհուրդը միշտ կատարել. ասելով. ով որ կ'ուտի իմ՝ մարմինը և կը խմի իմ՝ արիւնը՝ նա իմ՝ մէջ՝ ես էլ նորա մէջ կրքնակեմ. այսպէս Յիսուս հաստատեց Սուրբ պատարագի խորհուրդը:

— Յիսուսի պատուէրը կատարելու համար ամեն կիւրակէ և ամեն օրերին պատարագ է լինում ամեն քրիստոնէայ մարգ գնումէ եկեղեցի և ջերմեռանդութեամբ աղօթում, ոմանք էլ քահանայի առաջ իրանց մեղքերը խոստովանելուց և քահանայի բերանով Աստուծուց թողութիւն ստանալուց յետոյ հաղորդվումեն, ճաշակելով Քրիստոսի մարմին և արիւնը:

Սուրբ պատարագը Յիսուսի ամբողջ պատմութիւն է. սկզբից մինչև ողջունի ժամանակը՝ Յիսուսի ծնունդն է յիշեցնում իսկ ողջոյնից յետոյ մինչև աւարտը՝ Յիսուսի քարոզութիւնը, հրաշագործութիւնները, մատնուիլը չարչարուիլը խաչուիլն ու թաղուիլն է յիշեցնում:

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ.

Յամենայնի օրհնեալ ես տէր. Օրհնեմք ըզքեզ, գոյեմք զքեզ, Գոհանամք զքէն, ազատեմք զքեզ տէր Աստուած մեր:

\* \*

Միայն սուրբ, միայն տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ հօր. ամէն:

\* \*

Ամէն. Հայր սուրբ. Որդիդ սուրբ. Հոգիդ սուրբ: Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:


\* \*

Աստուած մեր, և տէր մեր երևեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ տեառն:

\* \*

Եղեցի անուն տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան:





<< Ազգային գրադարան  
  
NL0332631

